Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.12.2020թ. թիվ 2012013679 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<01>>__02__ **2021թ. 7-13-** 1023 **ք.Երևան**

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Անդրանիկ Գրիգորյանի **ՄԴ/4212-21** դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդովի փողոցի 2/1 շենքի 34-րդ բնակարանի բնակիչ Անդրանիկ Գրիգորյանը Ճանապարհային ոստիկանությանը հասցեագրած դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012013679 որոշմանը՝ չնշելով պահանջը հիմնավորող որևէ փաստարկ:

:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012013679 որոշումը բեկանման ենթակա չէ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Նույն հոդվածի 2-րդ մասով այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն **կանգառն արգելվում է՝ <u>հետիոտնային անցումների վրա</u>** և շարժման ուղղությամբ հետիոտնային անցումից առաջ՝ 5 մ մոտ վայրում:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012013679 որոշման հիմքում դրված տեսանյութի լրացուցիչ ուսումնասիրությունից պարզվել է, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 26.11.2020թ. ժամը 12:51-ին Երևան քաղաքի Տիգրան Մեծ-Միհր Մկրտչյան-Մելիք-Ադամյան-Հանրապետության փողոցների խաչմերուկի հատվածում տրանսպորտային միջոցը կանգնեցրել է հետիոտնային անցման վրա:

<u>Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար նախատեսված չէ արարքի նվազ նշանակություն ունենալու որևէ պայման (կանգառի տևողություն, ուղևորի նստել կամ իջնել, դիտավորություն, անզգուշություն և այլն):</u>

Այսպիսով հիմնավորվել է, որ դիմումատուին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

<u>Ո Ր Ո Շ Ե Ց Ի</u>

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 16.12.2020թ. թիվ 2012013679 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Անդրանիկ Գրիգորյանին:

Ե.Կարապետյան

Կատարող՝Ա.Հարությունյան
հեռ. (011) 54-47-83